

ՄԻՔՍՅԵԼ ՆԸԼԲԸՆԴԻԵՑՆՑԼ ՀՆԴԿԱԾՈՒ- ՆՈՒՄ¹⁾

Գլուխ է.

Դատը Բենգալիոյ լնդհանուր կառավարիչ Զարը-
լըզ Սվինտոն Հագի դէմ Մասեհ Բարաջանի գործի մա-
սին տեղի է ունենում Սուպրեմ-Կորտի ատեանում Բեն-
գալիոյ ֆորտ Վիլեամում 1861 թուի սեպտեմբերին։
Նալբանդեանցի կողմից վերոլիշեալ հալ օրէնսգէտ Պետ-
րոս Յակովը Պոլը ներկայացնում է դատարանին մի ըն-
դարձակ բոլոքագրի հետ հետևեալ վեց խնդրակէտը։

Ա. Որ կտակողի կտակը մեկնուած ու կատարուած
լինի կտակողի դիտաւորութեան համաձայն։

Բ. Որ գրաւոր սկտը, որ գրուած է 1795 թուի
Ապրիլի 1 ին, մեկնաբանուած լինի և որոշուած նորա
երաւարանական հետևանքը։

Գ. Որ բոլոր որբերի շահերը պարզաբանուած լի-
նի, ըստ մտաց կտակին և գրաւոր ակտին, և մի ան-
հրաժեշտ կարգ սահմանուած լինի կտակողի կալքի վե-
րաբերմամբ։

Դ. Որ այն դէպքում, եթէ դատարանը ճանաչէ,
որ լիշեալ գրաւոր ակտով նորա մէջ լիշուած տունը
տրուած է Ս. Գրիգորի եկեղեցուն, հաշիւ ու համար
կազմուած լինի, թէ որքան «Կոմպանու թղթեր» տո-
կոսների և տան արդիւնքի հետ միասին է գտնուում
պատախանատու Զարըլըզ Սվինտոն Հագի ձեռքին։

Ե. Որ այն մասերը, որոնք պատկանում են չորս
բարեգործական հաստատութիւնից ամեն մէկին և Ս.
Գրիգորի եկեղեցուն, եթէ այդպիսիներն որոշուած կը

1) Տես «Լուսայ» № 4.

լինեն, լանձնուեն պահանջողին:

Զ Որ պահանջողը նոյնպէս ստանալ և լետոյ այն բոլոր իրաւաբանական օգնութիւնն ու ձեռնտուութիւնը, որ հարկը կպահանջէ:

Այս խնդրակէտերի դէմ հակառակ կողմը ներկայացրել էր միալն երկու հետևեալ պատճառաբանութիւնը, որոնց հիման վերալ նա մերժել էր կատարել նույրանդեանցի պահանջը. Նախ, որ պատասխանատու Հագը ստացել է վարչութեան խորհրդից խրատ՝ ոչ մի բան իւր ձեռքին գտնուած կալքից շտալ, եթէ միալն չլինի այս դատարանի վճիռը, և այդ հիման վերալ էլ նա հրաժարուում է լանձնելու իւր ձեռքին եղած գումարներն ու կալքը. երկրորդ, որ պատասխանատուն, հնդկական գործերի պետական սեկրետարիը, պահանջում է լիշեալ Մասեհ Բաբաջանի կամ Մարտիրոսի կալքի շահերի պաշտպանութիւնը ան հիման վերալ, որ կտակողը վախճանել է ոչ նորա ժամանակ և որ լիշեալ կադիլլը վկայուած է միալն երկու ստորագրութեամբ:

Բողոքագիրն էլ իւր մէջ պարունակում էր գործի ամբողջ պատմութիւնը, կտակի համապատասխան յօդուածները և սեծ տան լատակագիծը: Նետաքրքրական էին նամանաւանդ մի քանի մանրամասնութիւններ, որոնք վերաբերում էին Հագի նախորդներին և նոցա պահած հատ ու կտոր հաշիւներին, կտակողի մահից լետոյ, 1797 թուի յուլիսի 12-ին, կտակի և կագիցիլի հաստատութիւնը ստացուել է կտակակատար Դիռնէսիս Հայրապետեանի միջնորդութեամբ Սուպրեմ-կորտի հոգեւոր բաժնից. 1807 թուին դեկտեմբերի 15-ին վախճանել է այդ Դիռնէսիսը և հաստատութեան իրաւունքը ձեռք է բերել միւս կտակակատար ներսէս Յովհաննէսը, որի մահից և միւս. կտակակատար Անտոն Մակտիերի կրտակակատարութեան պաշտօնից հրաժարուելուց յետոյ. 1814 թուի յունիսի 12-ին ստացել է լիազօրութիւն կառավարելու կալուածքը Սուպրեմ-կորտի հոգեւոր բաժնի ըեզիստրատոր պ. Դեմպլստեր Հելլինդը, որ վարել է ըեզիստրատորի պաշտօնը մինչև 1822 թիւը, երբ նորա տեղը նշանակուել է Սէր Ջեմսօն վիր Հոգգը.

Յիշեալ Հելլինգը կարգի է բերել կտակողի կալքի
շատ հաշիւները. առաջին հաշիւը նա կցել է գործին
1815 թուի նոյեմբերի 14-ին, իսկ վերջինը 1822 թուի
օգոստոսի 22-ին. Այդ հաշիւներից երեսում է, որ նա
1815 թուի օգոստոսի 29-ին պարտք է եղել կտակողը
կայքին 6964 կումպանու ռուփի, որ կազմում էր այն
գումարը, որ ստացուել էր Պորտուգալացւոց եկեղեցու
մօտ գտնուած տան վաճառումից, և որ նա առձեռն
պատրաստի ոչ մի գումար չի ստացել իւր նախորդ
Ներսէս Յովհաննէսից. Սէր Զեմսօն Հոգգը 1824 թուի
Մայիսի 31 ին կցել է գործին միայն մի հաշիւ, որից
երեսում է, որ նա 1824 թուի յունուարի 12-ին ծա-
խել է միւս տունը, որ գտնուում էր Ստ. Յարութիւ-
նեանի տան մօտ, 1500 ռուփիի, որովհետեւ Աննա ա-
ղախինը, որ մինչև իւր մահը պիտի տպրէր այդ տան
մէջ, մեռել էր Բացի սորանից, Հելլինգի և Հոգգի կազ-
մած հաշիւներից նկատուում է, որ շատ փող է հա-
տուցուած Պարտապահանց դատարանի վճռով դատա-
պարտուածների օգտին. Սէր Զեմսօն վիր Հոգգը հեռա-
ցել է պաշտօնից և նորա տեղը կարգուել է պ. Թէո-
դորոս Դիկկենսը, որ շուտով վախճանել է և նորան
հետզհետէ լաջորդել են Տուրտոնը, Սանդէսը և Զա-
րլըզ Սվենտուն Հոգը, որ, ինչպէս ասացինք, Նալ-
բանդեանցի Կալկաթայում եղած ժամանակները իւն. •
Գալիոլ գլխաւոր կառավարիչն էր: 1824 թուից սկսած
լիշեալ ընդիւստրատորներից և աղմինիստրատորներից
ոչ մէկը կտակողի կալքին վերաբերեալ և ոչ մի հաշիւ
չի ներկայացրել: Յիշեալ Սէր Զեմսօն վիր Հոգգի կազ-
մած հաշիւներից միայն երեսում է, որ 1824 թուին
նա ստացել է արքունի արժէթղթերով, որոնք սովորա-
բար կոչուում էին «Կումպանու թղթեր», 12,500 ռու-
փի ի հաշիւ կտակողի կալքին: — Դատարանը կարդալով
պահանջատիրոջ բողոքագիրը, լսելով Նալբանդեանցի
բացատրութիւնը և Դէորդ Աւետիքի, Յովհաննէս Յա-
րութիւնի և Յարութիւն Մայիսի. իբրև վկաների, ցուց-
մունքներն յօդուտ պահանջի, ի նկատի առնելով եր-
կու կողմի օրէնսգէտների և փաստաբանների դատո-
ղութիւններն ու մէջ բերած թեր ու դէմ փաստերը

և նալբանդեանցի տուած երգումը,թէ նախիջևանում կտակ անելու ժամանակներն եղել են և այժմ էլ գոյութիւն ունին այն դպրոցները և բարեգործական հաստատութիւնները, որոնք լիշուած են կտակի մէջ, իւր սեպտեմբերի 14-ին կալացած դեկրետով վճռում է նախ, որ նախիջևանի դպրոցներն, աղքատանոցը, որբանոցը և հիւանդանոցը հէնց այն հաստատութիւններն են, որոնց կտակողը կամեցել է թողնել իւր կարողութեան կէսը. երկրորդ, որ նալբանդեանցն ալդ հաստատութիւնների կտակարիչների իսկական և լիազօր երեսփոխանն է. երրորդ, որ զօրութիւն ունի միայն առաջին կտակը, ալսինքն 1774 թուի մայիսի 30-ին կազմուածը. չորրորդ, որ երկրորդ կտակը կամ յաւելուածը, ալսինքն 1775 թուի ապրիլի 1-ին կազմուածը, պարզեագիր չէ, ինչպէս պնդում է նալբանդեանցը, այլ կտակ, և որ այդ կտակն էլ վաւերական չէ, որովհետեւ երեքի փոխարէն միայն երկու վկայի ստորագրութիւն ունի. հինգերորդ, որ նալբանդեանցն իրաւունք ունի ստանալու մինչեւ 1861 թիւն անշարժ կալուածքից հաւաքուած եկտմտի կէսը, երկու կողմի գատարանական ծախսերը միջից հանելուց յետոյ և ապագալում ևս նորա ամեն տարուայ ըերած եկամտի կէսը ևս և ծախուած տներից գոյացած 10,464 ռուփի գումարի տոկոսների կէսը. վերջապէս, եօթերորդ, որ կալուածքը պիտի մնայ այնուհետեւ ևս աղմինիստրատորի ձեռքին, որ պէտք է կտակարէ և տարէցտարի նորա արդիւնքի կէսն ուղարկէ նախիջևան քաղաքագլխին:

Աղմինիստրատորի գատարանին ներկայացրած հաշիւներից այդ ժամանակ յալտնուում է, որ նորա ձեռքին ի հաշիւ ժառանգութեան կայ կոմպանու ռուփի—մի լակ, արքունի դրամատոմսերսվ—32 հազար ռուփի և Սիկկասի ռուփի—38,600, ուրեմն, ընդամենը—170,160 ռուփի, որովհետեւ մի լակը հաւասար է 100,000 ռուփիի. Այս գումարից էլ հանելով 10,464 ռուփին, որ իրեւ առանձին գումար առանձին էլ հաշիւ պիտի ունենար, նալբանդեանցն իրաւունք է ձեռք բերում ստանալու 160,135 գումարի կէսը. Ի հաշիւ այս գումարի նալբանդեանցը նախապէս ստանում է աղմինիս-

տրատորից 60,000 ռուփի, որի համար և տալիս է ձեռացագիր կամ ստացագիր, իսկ մնացեալ հաշիւները՝ վերջացնելու համար, նա կտրզում է Հագի համաձայն նութեամբ լիտզօր երեսփոխան Արգարեանց տուետրական տունը, որովհետև հաշիւները վերջնականապէս տեսնելու համար, հարկաւոր էր նորան ալլ ևս մի քանի ժամանակ մնալ Կալկտթալում, որ նա չէր կարող անել, որովհետև սետեմբերն արդէն վերջանում էր և մօտենում էր Հոկտեմբերը, այսինքն ծովալին երկար ճանապարհորդութիւն կատարելու համար ամենավատ ժամանակները:

Թէ յետոյ որքան է ալլ ևս ստանում Նալբան. դեանցը, մեզ ոճով լայտնի չէ, որովհետև լայտնի չէ, թէ որքան դատարանական ծախս էր եղել երկու կողմից, որ, դատարանի վճռով, առաջ պէտք էր հանել ընդհանուր դրամագլխից, յետոյ արդէն մնացածն երկու կէս անել: Յալտնի չէ նոյնպէս, թէ որքան փող է ստանում նա ֆախուած տների 10,464 ռուփի գումարից, որովհետև մենք տեղեկութիւն չունինք, թէ որքան տոկոս էր տալիս կտակակատար ադմինիստրատորը և որ գումարից նա պիտի հատուցանէր $\frac{1}{16}$ մասը Նախիջևանի քաղաքագլխին: Մենք միայն գիտենք, որ Նալբանդեանցը Կալկաթալից դուրս գալուց առաջ մի թուղթ է գրում պ. Յարութիւն Արգարեանցին, որի մէջ իւր անկեղծ սրտի շնորհակալիքը լայտնելով «Առ մեծարու Հայկազն» այն մեծ կտրեկցութեան համար, որ նա ցոյց էր տուել նորան ազգալին Հրիտակների վերաբերմամբ իւր առաքելութիւնը կատարելու ժամանակ և, բացի դրանից, սիրայօժար կերպով հսմածայնել էր լիազօր երեսփոխան լինելու Հագի հետ հաշիւները վերջացնելու և մնացեալ փողերը նորանից ստանալու համար, աւելացնում է, թէ որովհետև կը-տակի ընդհանուր հաշուետեսութիւնը տեսելու է ալլ ևս մի քանի ժամանակ և ինքն ալլ ևս միջոց չունի մնալու Կալկաթայում այդ պատճառով էլ նախապէս ստանալով Հագից 60,000 Կումպանու ռուփի «ի հաշիւկիսոյ բաժնին» և այդ մասին տայով նորան անդորրագիր իւր ձեռնագրով և պ. Աէթ Յարութիւնեան Ար-

գարի և Պօլի վկալութեամբ, կարգում է նորան երես-
փոխան և խնդրում է, որ Հագի հետ հաշիւը տեսնե-
լուց լեռոլ, բարեհաճի նա գումարի մնացորդը թենգա-
լու գրամանոցի միջոցով փոխադրել իւր անունով Լոն-
դոն և փոխանակագիրն էլ ուղարկել իրան, որ նա կա-
զողանալ ստանալ Անգլիոյ «բէնկից»: Այդ փոխանակա-
րի մէջ նորա անունը պիտի գրուէր «Michel Nalban-
doff», իսկ հասցէն՝ «Ches ham Hous, ches ham place»
ի գեսպանատունն Ռուսաց ի Լոնդոն» և գորա, ալդ
փոխանակագրի հետ միասին պիտի ուղարկուէր նորան
Հագի և Պօլի հաշիւները, որ նա կարողանար ներկայաց-
նել Նախիջևանի Հայոց կառավարութեան: Բացի սորա-
նից, Նալբանդեանցն ալդ թղթում լայտնում է, թէ
ինքն երկու վկալի—Գէորգ Աւետիքի և Յովհաննէս
Աւզալի վարձը՝ առաջնին 204 ռուփի և երկրորդին 80
ռուփի, համուցել է արժանալարդ պ. Սէթ Յարութիւ-
նեան Աբգարի ձեռքով պ. Պօլին և խնդրել է նորա-
նից, այսինքն Պօլից, որ նա ալդ երկու հարիւր չորս
կումպանու ռուփին մտցնէ ծախսերի ընդհանուր ցու-
ցակի մէջ և իւր ստացածի հետ միասին ստանալով կա-
ռավարիչ Հագից, յանձնէ Ս. Յ. Աբգարին, որ նա միաց-
նէ այն գուշարի հետ, որ գեռ պիտի ստացուի:

Թէև Նալբանդեանցի համար մի մեծ հարուած է
լինում այն հանգամանքը, որ գատարանը մերժում է
յաւելուածը կամ գրաւոր ակտը պարզեագիր ճանա-
չելու, որով Նախիջևանը զրկուում է մի խոշոր գումա-
րեց ու սեփականութիւնից, բայց նա բաւական է մը-
նում վճռից և աւելորդ է համարում գործը Լոնդոնի
գերագոյն ատեանը փոխադրել. նա կարծում է, որ Նա-
խիջևանցիք դորանով էլ պէտք է շատանան և գոհ մը-
նան, որ Հնարաւոր է եղել ազատել մինչև ալդ ժամա-
նակ կորած համարուած ժառանգութեան, գոնէ, մի
մասը, և երախտապարտ համարեն իւրեանց անձը դէ-
պի բարերարի լիշտատակը. նա միտքն է գնում Նախիջե-
ւան վերադառնալուն պէս, լորդորել իւր համաքաղա-
քացիներին մի մահարձան կանգնելու հանգուցեալի
գերեզմանի զերայ և մի պատշաճաւոր տապանագրով
արտալայտելու իւրեանց երախտագիտութեան զգաց-

մունքը և դորանով յաւերժացնելու բարերարի լիշտակըն ապագայում։ Այդ նպատակով էլ ահա նա մի պաշտօնական գրութեամբ դիմում է Ս. Նազարէթ եկեղեցու «Եկեղեցպան» պ. Կարապետ Յ. Վ. Վրթանիսեանցին և խնդրում է, որ նա գրաւոր տեղեկութիւններ հաղորդէ իրան 1797 թուին վախճանած Մասեհ Բաբաջանի կամ հասարակ կոչմամբ Արդարմսեհ Մարտիրոսի մասին, թէ որտեղ է նա թաղուած՝ անզլիական գերեզմանոցում, թէ եկեղեցու բակում, ինչպէս երևում է, նա անձամբ չէր կարողացել տեսնել գերեզմանը և ճշտել նորա տեղը։

Նոյն սեպտեմբեր ամսին տեղի է ունենում և տիկին Կատարինէ Խօջամալեանի դատը։ Օրէնսդէտ Պօլը Նալբանդեանցի կողմից ներկալացնում է դատարանին Հետևեալ իւր ձևով ու խմբագրութեամբ զատ Հետաքրքրական բողոքագիրն երեք խնդրակէտով։

Բարձրագոլն դատարանին Ֆօրտ Վիլիամում, բենգալիայում

Միքայէլ Նալբանդեանց պահանջատէր.
Վառվառէ Ելիազ, կտակակատար . . պատասխանատու.

Բողոքագիր.

Պարոններին բարձրապատիւ Սէր Բարնէլ Պիկոկին, ասպետին, գլխաւոր դատաւորին, և բարձրապատիւ Սէր Զարըլզ—Ռոբերտ—Միտչել Չակսոնին, ասպետին և Սէր Մորդաունտ Լաուսոն Վելսին, ասպետին, լիշեալ դատարանի կրտսեր դատաւորին։

Խոնարհաբար խնդրում է Զեր լորդութիւնից իւր կողմից և ևրոպական Ռուսաստանում գտնուած Նախիջեանում ապրող Հայերի կողմից Միքայէլ Նալբանդեանցը, որ ալժմ ապրում է Կալկաթայում, Դուրումտոլիահում, իսկ առաջ ապրել է լիշեալ Նախիջեանում, Հետևեալը։

Ս. Ոյն Հայուհի Կատարինէ Խօջամալ, որ 1803 թուին վախճանել է Բուսսորում, ունեցել է իւր սեփական կալքը Կալկաթայում։ Նորանից յետու մը նացել է իբրև ամենամօտ ազգական նորա եղբայրը։

Բ. 1796 թուի փետրուարին լիշեալ կատարինէ Խօ-
ջամալը կանոնաւորապէս կատարել ու յալտնել է իւր
վերջին կամքը մի կտակով, գրուած հայ լեզուով ու
տառերով, որով նա իւր եղբայր աղա Ելիազ Մինասին
և սիւներին կարգել է կտակակատար.

Գ. Ալդ Ելիազ Մինասը միայն ինքը ներկալացրել
է կտակն այս լարգելի դատարանի հոգեոր բաժնին
1803 թուին և կանոնաւոր կերպով վաւերացնել է
տուել.

Դ. Կատարինէ Խօջամալն իւր կտակը գրելու ժա-
մանակ ևս ապրելիս է եղել Կալվաթայում։ Նա, ինչ-
պէս ասուեցաւ վերը, վախճանել է չոչչացրած և չփո-
խած լիշեալ կտակը.

Ե. Կտակողն իւր կտակով որոշել է, որ իւր ամ-
բողջ կարողութիւնը բաժանուի տաս մասի և մի մասը —
վեցերորդն ուղարկուի Նախիջևան երկրի կամ գիւղի
բարեգործական հաստատութիւններին։ Յետու նա իւր
կտակում հետևեալն է կարգադրում։ Շնալեցէք. այսպի-
սով վերոյիշեալ տաս մասը պէտք է բաժանուի և իւ-
րաքանչիւրը նոցանից պէտք է տրուի այստեղ փաստա-
բանի ձեռքով, կամ թէ հաւատարիմ մարդկանց ձեռ-
քով։ Բացի սորանից, ես պահանջում ու պարտականու-
թիւն եմ դնում վերոյիշեալ քաղաքների ու վանքերի
Եշտանութիւնների վերայ, որ նոքա իմ կարողութիւ-
նիցս իրանց բաժին ընկած մասերով գնեն տներ, շէն-
քեր, մի կտոր գետին կամ ալգի մի որսշեալ և ապա-
հով տեղում և գնածը պահեն անձեռնմխելի, ինձ լիշա-
տակ, և նոցա եկամուտը միայն գործ գնեն յաւիտենա-
կանապէս։ իսկ նոքա, որոնք կօգտուեն, լիշեն ինձ իւ-
րեանց աղօթքներում։¹⁸⁾

Զ. Ալս կտակն անելու և կտակողի մեռնելու ժա-
մանակ եղել և ալժմ էլ կան Նախիջևանում երկու

18) Մի մեծ թիւրիմացութեամբ «Հնդկական գումար» ա-
սելով, Նախիջևանում մինչև ցայսօր հասկացել են միայն Մա-
սեհ Բարաջանի գումարը, և եկեղեցական հոգաբարձութիւնը,
որ ներկայումս այդ գումարի տնօրինողն է, դորա տոկոսները
ծախսելով կտակում յիշուած հաստատութիւնների վերայ, իւր
լուսւա

գպրոց, աղքատանոց, հիւանդանոց և որբանոց, որոնք հիմնուած են ալնտեղի Հայերի ձեռքով և որոնք պահուել են և ալժմ էլ պահուում են նոյն Հայերի ձեռքով։ Պահանջատէրը կարծում է, որ վերոլիշեալ կտակով կտակողը միտք է ունեցել նպաստել նախիջևանի Հայերին լիշեալ բարեգործական հաստատութիւնները պահպանելու գործում և ալսպիսով իւր սահմանած մասով մի որոշ հասոլթ հասցնել նոցա.

Ե. Ելիազ Մինասը վախճանել է շատ տարի առաջ, թողնելով մի կտակ, որով նա կարգել է կտակակատար իւր որդի Յօվհանջանին, որ և հաստատել է տուել կըտակն այս լարգելի դատարանում։

Ը. Յօվհաննէս Ելիազը վախճանել է 1860 թուին, թողնելով մի կտակ, որով նա կարգել է իւր ալրիին, պատասխանատուին, իրան կտակակատար, որ և հաստատել է տուել այդ կտակն այս լարգելի դատարանի հոգեսոր բաժնում։

Թ. Պատասխանատուն իբրև իւր ամուսնի կտակակատար ներկալումս ունի իւր ձեռքին 21,433 ռուփի պետական օբլիգացիաների ինը տոմսակով և 456 ռուփի առձեռն պատրաստի գումար, իսկ ընդամենը ի հա-

Հաշիւներում ու թղթերում յիշում է միայն Մասեհ Քարաջանի անունը։ Այդ մենք մի մեծ անարդարութիւն ենք համարում, որովհետեւ թէեւ, ճշմարիտ, Քարաջանի փողը մի խոշոր մասն է կազմում այդ գումարի, բայց նա ամբողջապէս նորան չէ պատկանում։ Հնդկաստանից, ինչպէս մեր այս յօդուածից երեսում է, բերուած է ընդամենը 54 հազար 750 ռուբլի, որի մեջ կար և Կատարինէ Խօջամալեանի 14 հազարի չափ գումարը։ Արդարութիւնը պահանջում է, որ այդ գումարը 62 թուից մինչև Հոգաբարձութեան ձեռքն անցնելը հաւաքուան իւր տոկոսներով ջոկուի Մասեհի գումարից, առանձին հաշիւ պահուի ու նորա տոկոսներից ծախսուին այն նպաստակների համար, որոնք յայտնուած են հանգուցեալ տիկնոջ կտակում, և այդպիսով և նորա անունը յիշուի հաշիւների մէջ, բարերարուածներն էլ իմանան այդ և յիշեն նորան իւրեանց աղօթքներում, ինչպէս որ ինքը բարեբարուհին ինդրել է իւր կտակակատարներից։

շիւ ժառանգութեան—21890 ռուփի, և նա կամենում է այդ հատուցանել, բայց միայն այս դատարանի վըճռով, ոչ այլապէս.

Ժ. Պահանջատէրը հայ է և եղել է մինչև Նախիքանից դուլս գալը, անցեալ տարուալ հոկտեմբերին, Կալկաթա գալու վերոլիշեալ կտակն ի յալտ ածերու նըպատակով, Նախիջևանի բնակիչ, և նա ունի օրինական լիազօրութիւն, Նախիջևանի Հայերից տրուած, որ դատարանով կարողանալ պահանջել և ի յալտ ածել ժառանգութիւնը, և այն լիազօրութիւնը Հայոց, Ռուսաց, Ֆրանսիացւոց լեզուներով անգլիական թարգմանութեան հետ միասին նա պատրաստ է ներկայացնել դատարանին.

ԺԱ. Պատասխանատուն Կալկաթայի բնակիչ է, և այդ իսկ պատճառով ենթարկում է այս դատարանի իրաւասութեան:

ԽՆՂՐԱԼԷՏԵՐ

Պահանջատէրը խնդրում է հետեւեալը.—

Ա. Որ Կատարինէ Խօջամալի կտակը մեկնաբանուած լինի և կտակի Նախիջևանին վերաբերեալ մասի իսկական իմաստը պարզաբանուած.

Բ. Որ ընդունուի, թէ Նախիջևանի Հայերն իրաւունք ունեն ստանալու իրանց օգտին թողած ժառանգութիւնը կտակով սահմանուած նպատակի՝ համար, և որ պատասխանատուն պարտաւորուած լինի հատուցանելու ի հաշիւ ժառանգութեան իւր ձեռքին եղած գումարը.

Գ. Որ պահանջատէրը ստանալ լետոյ ևս հարկ եղած իրաւաբանական գործակցութիւնը:

Պատասխանատուի անունը.

Այս բողոքագրի պատասխանատուն է Վառվառէ էլիազ, կտակակատարը.

Պահանջատիրոջ օրէնսգէտը . . . Պ. Յ. Պօլ.

Ժանօթութիւն. Այս բողոքագրը պատրաստուած է պ. Պօլի, վերոլիշեալ պահանջատիրոջ օրէնսգէտի ձեռքով, № 8, Հաստինգս-Ստրիտ, Կալկաթայում:

Վիկտորիա թագուհին.

Սորանում լիշուած պատասխանատու Վառվառէ Ելիազ, Յովհանջան Ելիազի կտակակատարին, ողջոյն Մենք հրամայում ենք Ձեզ, որ դուք... օրուալ ընթացքում սորա ձեզ յանձնուելուց յետով, բացի յանձնուելու օրից, գաք Մեր մօտ Ֆորտ-Վիլիամի բարձրագոյն դատարանը, Բենգալիայում, Միքայէլ Նալբանդեանցի բողոքագրով, որ դուք տեսնէք, թէ Մեր դատարանը կանոնաւոր է: Վկալում ենք Սէր Բարնէլ Պիկոկ, Ֆորտ-Վիլիամի բարձրագոյն դատարանի դատաւոր, ասպետ: Օգոստոսի... Ողորմութեամբ Աստուծոյ 1861 թուին և Մեր թագաւորութեան—25:

Ծանօթութիւն. դատարան գալը պէտք է գրուած լինի բարձրագոյն դատարանի բեգիստրատուրի մէջ Կալկաթայում, և եթէ դուք վերոիշեալ ժամանակամիջուցում դատարան չգաք, պահանջատէրը ստանում է իրաւունք դատը վարել ջեր դէմ ջեր բացակայութեամբ»:

Դատարանը լսելով, նախ, Նալբանդեանցի դատարանում տուած բերանացի մեկնութիւնները և երկու կողմի փաստաբանների մէջ բերած փաստերն ու ապացուցները, երկրորդ, կարդալով կտակը և վերահսու լինելով նորա իմաստին, երրորդ, խորհրդակցելով; թէ ինչ հաստատութիւններ պէտք է հասկանալ կտակող տիկնոջ «Նախիջևանի աստուածահաճոյ հաստատութիւններ» խօսքերից, և հաւաստիսնալով Նալբանդեանցի տուած երդումից, թէ Նախիջևանում հանգուցեալ տիկնոջ կտակ անելու ժամանակներն եղել են երկու դպրոց, մի աղքատանոց, մի հիւանդանոց և մի որբանոց և այժմ էլ դոքա գոյութիւն ունեն, վճռում է, որ հէնց գոքա էլ, ալսինքն դպրոցները, աղքատանոցը, հիւանդանոցը և որբանոցն, այն հաստատութիւններն են, որոնց դիտաւորութիւն է ունեցել կտակել հանգուցեալն իւր կարողութեան վեցերորդ մասը: Ալդ իսկ հիման վերալ պատասխանատու Վառվառէ Ելիազը պարտաւորւում է իւր ձեռքին գտնուած ի հաշիւ ժառանգութեան Նախիջևանի մասը հատուցանել Նալբանդեանցին, իբրև Նախիջևանի վերոիշեալ հաստատութիւնների լիազօր ներկայացուցչին:

Պատասխանատուի դատարանին ներկայացրած հա-
շիւներից լայտնում է, որ Նախիջևանին պատկանելիք
գումարի քանակութիւնն ալդ ժամանակ եղել է 21,433
ռուփի արքունի դրամատոմսերով և առձեռն պատրաս-
տի գումար 456 ռուփի-ընդամենը կույզանու ռուփի-
21,890, և տոկոսների հետ միասին—21,978, որից,
դատարանի վճռով, հանելով երկու կողմի դատարանա-
կան ծախսերը 809 ռուփի, Նալթանդեանցը 1861 թուի
սեպտեմբերի 14-ին ստանում է 21,168 ռուփի, որի
համար և տալիս է ստացագիր:

Գլուխ Հ.

Բացի հրետակների խնդրից, Նալթանդեանցը Կալ-
կաթուում գործից ազատ ժամանակ պարապում է և
ուրիշ գործերով. նա իրեւ լաւ դիտող և ամեն բանի
հետաքրքիր մարդ ուշադրութիւն է դարձնում իրան
շըշապտող կեանքի պալմանների և իրան պատահած
մարդկանց ու հասարակութիւնների վերալ և առատ
ու հետաքրքրական նիւթեր է հաւաքում, որ իւր ճա-
նապարհորդական բազմաթիւ լիշողութիւնների հետ
միասին մտածում է մի օր կարգի բերել և հրատարա-
կել նորա դիտածն և ուսումնասիրածը, ի. հարկէ, գըլ-
խաւորապէս վերաբերում էր հայկական կեանքին, հայ
հասարակութիւնների, հայ նշանաւոր մարդկանց, հայ
հաստատութիւնների կացութեան պալմաններին, Ա-
ռանձնապէս նորան հետաքրքրում էր հայ հոգևորակա-
նութիւնը, և նա որտեղ միայն պատահում էր, աշխա-
տում էր ծանօթանալ, իմանալ, թէ ինչպէս են պա-
հում իրանց հայ հոգևորականները, ինչպէս են նոքա
կառավարում իրանց խնամքին լանձնուած հոգևոր հօ-
ռը, ինչպէս և նոցա և ժողովրդի լարաբերութիւնը,
ինչ բարոյական ազգեցութիւն ունին նոքա ժողովրդի
վերայ, և ալին և ալին:

Դեռ 1860 թուի փետրուարի 11-ին նա Պետեր-
բուրգից մի ընդարձակ նամակ էր գրել երջանկալիշա-
տակ Մատթէոս կաթողիկոսին, որի մէջ ներկայացրել, նը-
կարագրել էր մեր հոգևորականութեան անմիթաց

դրութիւնը և ցոյց էր առել դորանից առաջ գալիք վտանգը հայ ժողովրդի համար ապագայում և դորա առաջն առնելու անհրաժեշտութիւնը։ «Առ մեզ անակտք առ ամենայն կացութիւն մարդ, պիտանացու դատի առ հոգեորականութիւն»—ահա այն գլխաւոր տեղիսը, որ նա զարգացրել էր այն նամակի մէջ, աղերսելով, որ նորին վեհափառութիւնը բարեհաճի ուշադրութիւն դարձնել ալդ հանգամանքի վերալ, որ չարիքի սկզբնապատճառն էր, և իւր ազդու խօսքով ու նպատակալարմար կարգադրութիւններով հոգեորական բարձր պաշտօնը և կոչումը նախանձելի դարձնէ և արժանաւոր մարդկանց համար։

Այժմ՝ Կալկաթալում դիմելով հայ փոքրիկ գաղութի հոգեոր և բարօյական անմխիթար կացութիւնը և ալդ հանգամանքը վերագրելով հայ հոգեորականութեան ապիկարութեան, նա վերստին դառնում է նոյն խնդրին և սկսում է նիւթեր հաւաքել ալդ մս սին։ Կարճ միջոցում նորա ձեռքին ամբարուում են բազմաթիւ շատ յաւալի, բայց և նոյն ժամանակ շատ հետաքրքրական նիւթեր, որոնք բոլորը ևս ցոյց են տալիս հայ հոգեորականութեան ընկած դրութիւնը և ալդ հեռաւոր անկիւնում, որտեղ վտանգն աւելի մեծ էր, որտեղ հոգեոր իշխանաւորներից պահանջուում էր աւելի աշալրջութիւն։ Կենդրոնական իշխանութիւնը—Ասպահանու և Հնդկաստանի առաջնորդը, Նոր-Ջուղալի Ամենափրկիչ վանքում նիրհում էր քաղցր հանգստութեան մէջ. բազմաթիւ նուիրակներ նոր-Ջուղայից ամեն տարի գալիս-գնում էին, անընդհատ առատ նուէրներ էին հաւաքում Կալկաթացի, Մադրասցի, Բոմբարայի, Բատտաւիացի և ուրիշ տեղերի հարուստ վաճառականներից յօգուտ տռաջնորդանիստ վանքի, Նոր-Ջուղալի դպրոցների, տպարանի և ուրիշ բարեգործական և ազգօգուտ հաստատութիւնների, բայց և ոչ մի ռուփի իւր իսկական նպատակին չէր հասնում։ Դարձեալ դպրոցներ չկալին ոչ միայն Ասպահանի շրջակալքում գտնուած խղճուկ հայ գիւղերում, ոչ միայն Հնդկաստանի կորստեան անդունդին հասած հայ գաղութներում, ալլ և նոյն իսկ մի օրինա-

ւոր գպրոց չկար և նոր-Զուղալում, որտեղից, իբրև կենդրոնից, իսկապէս և պէտք է տարածուէր հայ հոգեւոր լուսն ալդ ընդարձակ թեմի ամեն կողմը ցրուած հայ գաղութների վերալ. չկալին բարեգործական հաստատութիւններ, չկար ոչ մի ազգօգուտ ձեռնարկութիւն, չկար գործ, կենդանութիւն, այլ ամեն բան մեռած, ամեն բան մատնուած անտարբերութեան. Առաջնորդական տպարանն ընկած-մնացած էր անգործագրելի փոշիների տակ, սիմօնականութիւնը բոյն էր գրել առաջնորդաբարանում և նորանից կախեալ բոլոր վիճակներում, իսկ Ամենափրկիչ Վանքն այն աստիճան աղքատ, այն աստիճան կողոպտուած էր, որ մինչև անգամ վանքի և առաջնորդաբարանի առօրեալ պէտքերը հոգալու համար Վանական վարչութիւնը ստիպուած էր պարտք անել, այն էլ ումից — առաջնորդի Ղազար ծառալից... Եւ երբ ամբողջ թեմն այս վիճակի մէջ էր, ինքն առաջնորդը՝ Թագէոս արքեպիսկոպոս Բէկնազարեանը, փառայեղ, փաշաներին միայն վայել կեանք էր վարում, շքանշաններ էր ստանում Պարսից իշխանութիւնից և ալդ առթիւ շքեղ հանդէսներ էր սարքում և փառաւորուում ու հռչակում «Մասեաց Աղաւնի»-ի էջերում Ալյազեանից:¹⁴⁾

Նալբանդեանցն ալդ նիւթերից գրդուած, իւր վերադարձին, գարձեալ Պետերբուրգից գրում է կաթողիկոսին երկրորդ ընդարձակ նամակը, որի մէջ ամենավատ գոյներով է նկարագրում Թագէոս արքեպիսկոպոսի գործունէութիւնը և թեմի մէջ եղած բոլոր չարիքը վերագրում է ամբողջովին նորան։ Առաջնորդը, նորա ասելով, եւ անգործունեալ էր, եւ կաշառակեր, եւ ժողովուրդը կեղեքող, եւ Ամենափրկիչը կողոպտող։ Որքան ուղիղ էր նորա գրածը և առհասարակ որքան արդարացի էր ալդ նամակի մէջ նորա վերաբերսունքը դէպի առաջնորդը։ Մեր ձեռքը

14) Տես 1861 թուի «Մասեաց Աղաւնի»-ի յուլիսի տետրակը — «Նկարագիր հանդիսի պարգևնկալութեան Սրբազն Արքեպիսկոպոսին Թագէոսի, Առաջնորդին Հայոց Պարսկաստանի և Հնդկաստանի».

շեն հասել այն գրաւոր վկայութիւնները և փաստերը, որ նա, իւր ասելով, ստացել էր Կալկաթալում թէ աշխարհականներից և թէ հոգեւորականներից և որոնց հիման վերալ գրել էր իւր նամակը, որ մենք կարողանալինք մի ճիշդ հայեացք կազմել այդ մասին։ Մենք կարծում ենք, որ նորա նըկարագրածն ընդհանրապէս ճիշդ է, միայն մեզ թոււում է, որ հանգուցեալն աւելի է խոտացրել այն գաստերի գոյները, որոնք վերաբերում էին առաջնորդի անձին, և այդ ոչ առանց անձնական հաշիւնների ներշնչման, որոնք ըղիում էին առաջնորդի հնդկական հրիտակների վերաբերմամբ բռնած գիրքից և նորա այդ մասին Ալվազեանի հետ ունեցած լարաբերութիւնից։ Թադէսս արքեպիսկոպոսն այդ ժամանակները, ալիսինքն 1861 թուին, արդէն տասերորդ տարին էր ինչ կառավարում էր Ասպահանու և Հնդկաստանի թեմը, և չէր կարելի ասել, որ Նալբանդեանցի մէջ բերած չարիքները և նկարագրած թեմի բարոյական տասուր պատկերը գոյութիւն ունէին, առաջ էին եկել հէնց նորա առաջնորդութեան օրերով։ Թեմի այդ անմիտիթար դրութիւնը պատմուկան տիսուր անցեալի հետևանքն էր, մի երկար շարք թեմական առաջնորդների վատթար գործունէութեան, կամ, յաւ է ասել, անգործութեան արգասիքը։

Մեր հին առաջնորդներն իւրեանց պարտականութիւնն ընդհանրապէս այնպէս չէին հասկանում, ինչ պէս այն ժամանակ հասկանում էր Նալբանդեանցը, կամ ալժմ մենք. բարոյական ազգեցութիւն, լուսաւորութիւն և բոպական մտքով, հօգևոր հօտի շահերի պաշտպանութիւն նոքա կամ իսպառ լսած չէին և կամ, եթէ լսած էլ էին, չգիտէին, չէին հասկանում, թէ ինչպէս պէտք է լինէին դոքա կեանքում, գործադրութեան մէջ։ Դպրոց ասելով, նոքա հասկանում էին մի ժիրք կարդալ սովորելու, շարտկան երգել վարժուելու և փոխասացութիւն անելու տեղ. եկեղեցի ասելով, նոքա հասկանում էին մի ժամ ասելու, մոմ վառելու, աղօթք անելու, զանազան ծէսեր կատարելու, մատաղուտելու ու բաժանելու տեղ. Առաջնորդն իրան համարում էր լիազօր տէր իւր թեմում գտնուած բոլոր ե-

կեղեցիների, վանքերի, ուխտատեղիների. նա իւր անձնական և հասարակաց հաստատութիւնների ունեցածի մէջ խտրութիւն չէր անում. նա կարծում էր, որ ժողովուրդը պէտք է պահէ իրան, առատ ժամոցներ ու աջահամբոլներ պիտի տալ, իսկ դուրս փոխարէն չնքը սլիտի լիշէ նորան ազօթքներում պատարագի ժամանակ և քսհանալ ձեռնադրէ նոցա հսմար, և ալին և ալլն: Թադէոս արքեպիսկոպոսն անցեալի ալդ երկար շարք առաջնորդներից մէկն էր նոցա բոլոր առաւելութիւններով ու պակասութիւններով և Նալբանդեանցի ասածները պէտք է վերագրել ի դէմս նորա բոլոր առաջնորդներին անցեալում, ֆողովուրդն ինչ էր տուել նոցա, որ ինչ պահանջէր, Մայր Աթոռն ինչ պատրաստութեամբ էր ուղարկել նոցա վիճակ, որ ինչ ակնկալիք ունենար նոցանից: Մենք դեռ աւելին կասենք, թադէոս արքեպիսկոպոսը դեռ մի բանով էլ վեր էր իւր նախորդներից և իւր ժամանակակից պաշտօնակիցներից շատերից: նա այնքան հետաքրքրում էր հասարակաց գործերով, որ աշխատում, հետամուտ էր լինում ստանալու ազգին պատկանած հրիտակները, եթէ ի հորկէ, դորանում էլ, առաջնորդի ալդ ձգտումի մէջ էլ, շահասիրական միտումներ տեսնելու շլինենք, ինչպէս որ տեսնում էր Նալբանդեանցը:

Բացի հոգևորականութեան մասին գրած նամակից, Նալբանդեանցն, իւր վերադարձին, գրում է ալլ ևս մի նամակ կաթողիկոսին, որքան լիշում ենք, դարձեալ Պետերբուրգից: Այս անգամ էլ նա հաղորդում է վեհափառին իւր՝ Կալիխաթայի Ա. Նազարէթ եկեղեցու տարեկան հաշիւների ուսումնասիրութեան արդիւնքը. նա եկեղեցպան պ. Վ. Րիթանիսեանցի ծխական ժողովին ներկայացրած հաշիւներից, ի միջի ալլոց, վերահասուլինելով, որ էջմիածնապատկան մի փոքրիկ գումար կալ եկեղեցու փողերի մէջ, հարց ու փորձ է անում ալդ մասին և խօսք է առնում պ. Աբգարեանից իսկուն եթ ուղարկելու ալդ փողը Մայր-Աթոռը, եթէ միայն լինի կաթողիկոսի գրաւոր հրամանը: Հաղորդելով ալդ մասին Ա. Էջմիածին, Նալբանդեանցը հրաւիրում է նորին վեհափառութեան ուշադրութիւնն ալդ հանգա-

մանքի վերալ և առաջարկում է կամ իրան յանձնել ալդ գումարի ստանալն ու տեղ հասցնելը, կամ անմիջապէս դիմել Կալկաթա պ. Աբգարեանցին և այնտեղից ստանալ:

Թէև Նալբանդեսնցը լունիսի 26-ից Սուլթանշահին գրած իւր վերօյթշեալ նամակում գրում էր, թէ դեռ ինքն էլ չգիտէ, թէ որ ճանապարհով պիտի վերադառնալ Մուսաստան—Լոնդոնի, թէ Պօլսի վերայով, բայց նա վերջերում արդէն որոշած է լինում ալդ խընդիրը և վերադառնում է Լոնդոնի վերայով: Նա Կալկաթայից ճանապարհ է ընկնում հոկտեմբերին և անցնելով սովորական ճանապարհով, ալսինքն Սուէզով, Ճանում՝ է Միջերկրական ծովը, թէ ալդտեղից նա դէպի որ կողմն է ուղղուում, առաջ որ քաղաքն է մըտնում,—մենք մեր ձեռքին ալնափիսի հաւաստի վաւերսկաններ չունենք, որ ճշտիւ որոշենք: Սակայն մի կողմից ի նկատի առնելով ժամանակիցների վկալութիւնը, միւս կողմից էլ մեր ձեռքին եղած հատուկտորթղթերի հաղորդածը, կարող ենք շատ հաւասական կերպով ասել, որ նա, նախ՝ մտնում է Եգիպտոսի Աղեքսանդրիա և Կահիրէ քաղաքները, յետոյ այցելում է Յոպպէ-Երուսաղէմը, որտեղից ուղևորուում է Պօլիս և ալդտեղից էլ Խոալիալի և Ֆրանսիալի վերայով անցնում, հասնում է Լոնդոն և վերադառնում է Պետերբուրգ 1862 թուի լունիսի 18-ին, գործ դնելով իւր ալդ վերադարձի ամբողջ ճանապարհորդութեան վերալ 8—9 ամիս ժամանակ:

Ալստեղ մեզ դարձեալ պակասում են ալնափիսի գըրաւոր վկալութիւններ, որոնց հիման վերալ մենք կարող լինէինք ճշդիւ որոշել այն բոլոր տեղերը, որ նա այցելել է և որտեղ նա երկար մնացել է, անուն անուն լիշել այն նշանաւոր մարդկանց, որոնց հետ նա տեսնուել, ծանօթացել ու յարաբերութիւն է ունեցել, և մէջ բերել այն գործերը, որոնցով նա հետաքրքրւել ու զբաղուել է արտասահմանում: Մենք միայն կարող ենք ասել, որ նա երկար մնացել է Երուսաղէմում, Պօլսում, Պարիզում և Լոնդոնում և ալդ կենդրոններում նա ընդհանրապէս ունեցել է այն գործունէու-

թիւնը, որ մենք մէկ անդամ արդէն նկարագրել ենք¹⁵⁾: Մեր ասածների վերալ մենք ա:ժմ միայն կարող ենք աւելացնել մի քանի մանրամասնութիւններ: Պօլսում Հայերն ընդունել են նորան գրկաբաց. նորա պատուին այստեղ բազմաթիւ հանդէսներ և ճաշկերոյթներ են սարքել, լրագիրները յալտնելով նորա թուրքիոյ մալրաքաղաքը ժամանելու մասին, նորա անձի վերաբերմամբ մեծամեծ դրուատիք ու ներբողեաններ են կարդացել, և ալին և ալին: Խտալիալում հնդկական ոռուփիների իտալական արքունի արժէթղթերի փոխելու գործը նա կատարել է ոչ ինքնագլուխ, ալլ նշանաւոր Մաձինիի խորհրդով, որ յուսադրել է նորան, թէ խտալական նորակազմ թագաւորութեան ալդ դրամատոմսերի գինը շուտով շատ կբարձրանալ: Պարիզում նա գրելով իւր «Երկու տող»-ը և տպագրելով Արամեան տպարանում, դորանով նա նպատակ է ունեցել, բացի Ալվագեանին խայտառակելուց և «Երևակի» խմբագեր Յօվհաննէս Տէր-Կարսապետան Տէրոյեանց Զամուռճեան Պրուսացուն պատասխաննելուց, և ի մի ամփոփելու հայ հոգևորականութեան մասին զանազան տեղերում իւր հաւաքած նիւթերի ուսումնասիրութեան արդիւնքը, պարզելու Հիւսիսափայլի «Հայոց եկեղեցու ոտքից մինչև գլուխ ըէֆորմ» պահանջելու խնդիրը և ձևակերպելու իւր ցանկութիւնները Հայոց եկեղեցու վարչական կազմակերպութեան մէջ լինելիք բարեփոխումների նկատմամբ: «Ալո՛, ըէֆորմ խնդրում ենք այն սկզբունքների մէջ, գրում է նա, իւր ալդ ցանկութիւններին վիճաբանութեան՝ ձև տալով, որոնցից կախուած են հոգեսոր մարդերի որ և է պաշտօն ստանալը, ըէֆորմ պահանջում ենք եկեղեցու տնտեսական կառավարութեան մէջ, որպէս զի ալսուհետև գէթ եկեղեցական

¹⁵⁾ Մենք մեր «Միքայէլ Ղաղարեան Նալբանդեանդ» գրքում այդ գործունէութիւնը նկարագրել ենք իբրև կատարուած հանգուցեալի Հնդկաստան մեկնելու ժամանակ: Այստեղ այդ պէտք է ուղղել այն մտքով, որ գա, այդ գործունէութիւնը, կատարուել է հանգուցեալի և, մեկնելու եւ վերադառնալու ժամանակ, 1861—1862 թուերին:

գանձերը չլավշտակուեն, չգողացուեն և եկեղեցական ոսկի և արծաթի սպասքը հրէալ ոսկերիչների քուրաների մէջ չհարուեն..., բէֆորմ պահանջում ենք հոգեոր իշխանների և առ հասարակ եկեղեցականների դէպի ազգը ունեցած լարաբերութեան մէջ: Պարտական են նոքա ուղղել իւրեանց ընթացքը. մինչև ալժմ վարձկան պորտաբոլծ և ոչ հովիւ հօտաբոլծ, մինչև ալժմ բողոքել է նոցա համար մարդարէն. «Ոհ հովիւք, որք զանձինս արածէք և ոչ զխաշինս»: Բէֆորմ պահանջում ենք եկեղեցականների կրթութեան և դաստիարակութեան մէջ քահանալ ունենք, որ կարդալ չգիտէ, քահանալ ունենք, որ հայերէն չէ կարող խօսել: Բէֆորմ պահանջում ենք եկեղեցականների ձեռնադրութեան պայմանների մէջ. մինչև ալժմ «Ոռ մեզ անպէտ առ ամենալն կացութիւն մարդ, սկիտանացու դատի առ հոգեսրականութիւն», մինչև ալժմ սիմոնականութիւնը վերջին տեղը չունի... Բէֆորմ պահանջում ենք առ հասարակ եկեղեցական կառավարութեամբ լառաջանալով, մեծ մասով պատճառ է եղել ազգի դարաւոր թշուառութեան»:¹⁶⁾

¹⁶⁾ Պարիզում և այդ ժամանակն է հաւանականապէս զըրել նալբանդեանցն և իւր մի ընդարձակ յօդուածը, որ այժմ կորած է համարուում և որից մեր ձեռքն է հասել միայն մի հատուած: Թէ ի՞նչ նիւթի մասին է եղել այդ գրուածքը և ի՞նչ բովանդակութիւն է ունեցել նա ընդհանրապէս, մօտաւու բապէս մեզ կարող է գաղափար տալ այդ մասին մեր ձեռքը հասած հատուածը, որ կրում է հետևեալ վերնագիրը՝ «Հոգաբարձութեան համակարգութիւնը Լուդվիկոս ՏՎ ձեռքով ներս է բերվում դպրութեան մէջ: Այսպիսի դաշնակցութեան—մտածող դասակարգերի և կառավարող դասակարգերի մէջ—հետեւանքի ըննութիւնը»:

(Գլուխ Թ.) «Ընթերցազը կարող է այժմ հասկանալ, թէ ի՞նչ կերպով ուժ ստացան Ֆրանսիոյ մէջ հոգաբարձական համակարգութիւնը և նորա հետ կապակից ստորադրութեան հասկացութիւնը, որ բնաւ անծանօթ էր Անգլիայում, և պատճառեղին այս երկու աշխարհների էական տարբերութիւն-

Նախիջևան Նալբանդեանցը հասնում է մօտա-
լորապէս լուլիսի կիսին և ալդտեղ էլ նա կարողա-

ք ը Պրագէս զի կատարեալ լինի համեմատութիւնը, դեռ
ևս հարկաւոր է հետազոտել, թէ ինչպէս ազդեց այս
համակարգութիւնը քրանսիոյ՝ որպէս բուն մտաւորական
պատմութեան, նոյնպէս և նորա ընկերական և պօլի-
տիկական պատմութեան վերայ: Կախութեան (կախ լի-
նելու, ենթադրեալ (ինելու) գաղափարը, որոնց վրայ
հիմնվում է հոգաբարձական համակարգութիւնը, ուժ են տալիս
այն հաւատին, թէ պօլիտիկայի և հասարակական յարաբերու-
թեանց մէջ եղած ստորադրութիւնը պէտք է նոյնպէս, որ լինի
և դպրութեան մէջ, թէ հայրական, ամեն բանի մէջ մտնող և
կենարոնացնող համակարգութիւնը, որ կառավարում է մի աշ-
խարչի նիւթական շահերը, պէտք է նոյնպէս, որ կառավարէ
և գիտութեանց շահերը: Այս պատճառով, երբ բոլորովին ջնջ-
ված էր քրօնղը, ամեն բան պատրաստված էր այն անսովոր
մտաւորական վիճակի համար, որ յիսուն տարու միջոցում մի-
յատուկ ընաւորութիւն տուեց Լուղովիկոս ՏԵՎԻ թագաւորու-
թեան և քրանսղտիկան դպրութեան հայար եղաւ նոյն բանը,
ինչ որ ներքին և արտաքին պօլիտիկայի համար էր ֆէօդա-
լիկմը: Այս երկու դիպուածումն էլ մի կողմում էր պաշտելու-
թիւնը, իսկ միւսում հովանաւորութիւնը և շնորք: Ամեն մի
մատենագիր մարդ դարձաւ քրանսղտիկան գահի վասսալը: Ա-
մեն մի գիրք աշխատում էր արժանանալ թագաւորական ողոր-
մութեան, և թագաւորի հովանաւորութիւնը վաստակելը հա-
յարվում էր մտաւորական արժանաւորութեան մի ամենազօր
ապացոյց: Այս համակարգութեան պատճառած հետևանքը պի-
տի քննվին այս զրբի մէջ Այս համակարգութեան երեսութա-
կան պատճառը էր Լուդ. ՏԵՎԻ անձնական ընաւորութիւնը.
բայց սույգ և հիմնաւոր, պատճառները պարունակվում էին
այն պարագաների մէջ, որ ես արդէն դոյց տուի և
որոնք արմատացուցին քրանսղտիկան մտքում զանազան հա-
կագողութիւնը, որ իրենց լիակատար ուժի մէջ մնացին
մինչև ՏԵՎԻ դարը: Հաստատել այս հասկացողութիւնը
և ներս մտնել նրանց կեանքի բավանդակ ասպարէղ-
ներում էր Լուդ. գլխաւոր Խորհուրդը, նպատակ, որին

նում է մնալ միայն 3—4 օր։ ¹⁷⁾ Նա հաշիւ չի կարողանում տալ հասարակութեան իւր ստանձնած և ալնքան յաջողութեամբ կատարած գործի մասին, թէև պատրաստած է լինում մի ընդարձակ պաշտօնական գործ, որի մէջ ամփոփուած է լինում նորա գրած ու ստացած պաշտօնական թղթեր ու հաշիւները գործի ամբողջ պատմութեան հետ միասին։ Նա կարողանում է միայն թողնել իտալական տոմսակները, որոնք նորա առած գնով արժէին ճ. 750 ռուբլի, և լետոյ Պետերբուրգից արդէն նորա ցուցմունքով նորա եղբալր Ղազարոսը ստանալով նորին կալսերական մեծութեան դիւնատան երրորդ բաժնից հրիտակներին վերաբերեալ ամենակարեւոր թղթերը, ուղարկում է քաղաքագլուխ Հայրապետեանին։

Ա. Կալկաթալի դատարանի վճռի պատճէնը Մասեհ Բաբաջանի գործի մասին, գրուած մտդաղաթի վերալ, մեծ կնքով.

Բ. Կառավարինչ Հագի ներկալացրած ընդհանուր հաշիւը Մասեհ Բաբաջանի գործի մասին.

Գ. Կատարինչ Խօջամալեանի տոկսարեր թղթերի հաշիւը.

Դ. Աբգար և ընկերութեան հաշիւը Կատարինչ Խօջամալեանի ծախուած տոմսակներին վերաբերեալ.

Ե. Կալկաթալի դատարանի վճռի պատճէն Կատարինչ Խօջամալեասի գործի մասին։

Հասաւ նա կատարեալ աջողութեամբ եւ ահա այս կողմից նորա թագաւորութեան պատմութիւնը շատ խրատական է, պատճառ նա մի իմաստ նշանաւոր օրինակ է ամենակատար և ամենապարունակ յիսնամեայ բռնակալութեան եւրոպայի գլխաւոր քաղաքագործուած ազգերի մինի վրայ—մի ազգի, որ ոչ միայն առանց գժգոհութեան տանում էր նորա լուծը, այլ ուրախ ուրախ և մինչեւ անգամ երախտապարտութեամբ հպատակվում էր նորան, որ դրել էր այդ լուծը։

¹⁷⁾ Մենք կարծում ենք, որ հանգուցեալը հասած պիտի լինի նախիշնան յուլիսի 10—11-ին, որովհետեւ նա իւր բանտարկութեան տարեգութեամբ համարում էր յուլիսի 14-ը։ Ըյդ մասին մենք նորա բանտում գրուած յիշատակարան-տետրակի

Ի՞նչ արդիւնք ունեցաւ Նախիջևանցւոց համար Նալբանդեանցի ստացածները և ի՞նչպէս օգտուեցան նոքա այն գումարից. որ նա այնքան մեծ աշխատանքով բերել էր Հնդկաստանից, և որ չափով և ի՞նչպէս առհասարակ իրագործուեցան նորա լուսերը, նպատակները:

Նալբանդեանցը, ի հարկէ, չկարողացաւ տեսնել իւր աշխատանքի արդիւնքը, որովհետեւ նա այնքան էլ շուտ չազատուեց արգելանքից, իսկ երբ որ էլ ազատուեց, արդէն բանը բանից անցել էր. նա գնաց կամիշին մեռնելու: Հտնգուցեալի գլխաւոր լորսն ու նպատակը՝ բերած փողով մի օրինաւոր հայկական դպրոց կանգնած տեսնել Նախիջևանում, տարէցտարի լետաձգուեց և, վերջ ի վերջով, իսպառ չիրագործուեց, առաջին տարիներն այդ առթիւ և այդ գույմարի չորս կողմը ծագած խռովութիւնների պատճառով, լետագայ տարիիներն էլ մալր գումարի տոկոսների և տարի տարի Հնդկաստանից ստացուող եկամտի սակաւութեան պատճառով, մինչև որ 1881 թուին հաստատուեց նոր Նախիջևանի և ինսսարաբիոյ թեմական դպրանոցը, որ մի ուրիշ հայկական մեծ դպրոցի գոյութիւնը քաղաքում բոլորովին աւելորդ դարձրեց: Եթէ չի նէր քաղաքացւոց մշտական անհաշտութիւնը և ամեն բան իւր սաղմում խեղդող, մեռցնող Նախիջևանի հասարակութեան անտարելրութիւնը, գումարի պակասութիւնը ի հարկէ չէր կարող արգելք լինել. դպրոցի պահպանութեան համար հարկաւոր միջոցները կարելի էր հոգալ մասամբ եղած գումարից, մասամբ

3 Էջում 1863 յուլիս ամսի 14 տակ նշանակուած ենք տեսնում հետևեալ ծանօթութիւնը՝ «Այսօր Տարեգլուխ է բանտարկութեանս, 14 յուլիսի, 1862-ից սկսած»: Դոյն թուլիսի 10 և 11-ի տակ գրուած են՝ «Ստացայ բօլբի վիճակագրութիւն և Լուիսի գիրքը. նամակ գրեցի եղբօրս, որ կերթայ վազը: Այս նամակը պատեցի, չուղարկեցի և «Առողջութիւնս թէւ լաւ է քան թէ առաջ, բայց տակաւին շատ տկար եմ. Լերդս ու գլուխս ցաւում են: Նամակ չստանալու համար աղբաթս էլ խառնված է»:

քաղաքի գանձարանից, մասսամբ էլ մասնաւոր աղբեւը-ներից, ինչպէս մի անգամ պաշտօնապէս վճռում էլ են անել, երբ Ստ. Նազարեանցին յալտնի «Հայկական գիմնազիոնի» ծրագիրն են գրել տալիս: Գլխաւորապէս չի եղել մի եռանդուն, կամքի տէր, սրտացաւ մարդ, որ գործի գլուխն անցնէր և իրագործէր թղթի վերալ միայն գոյութիւն ունեցած Սահակ-Մեսրոպի դպրոցի գաղափարը, իսկ սովորական, հասարակ մարդկանց թուլ ոլժերը հեղտութեամբ ջլատել են ալնպիսի արգելքները, ինչպիսին էին գումարի պակասութիւնը և քաղաքում հին ժամանակներից բոյն դրած անընդհատ խոռվութիւնները:

Նախիջևանցիք չիրագործելով Նալբանդեանցի գըլ-խաւոր Նպատակը, չի կարելի ասել սակայն, որ բոլորովին չեն օգտուած նորա աշխատանքի արդիւնքից, միայն որ այդ օգտուելը լինում է վերին աստիճան տարօրինակ կերպով, աննպատակալարմար, հակառակ կըտակի բուն իմաստին և կտակողի իսկական դիտաւորութեան ու ցանկութեան: Մեր կարծիքով, որ հիմնուած է Նախիջևանի պատմութեան մանրակրկիտ ուսումնասիրութեան արդիւնքի վերալ, Ս. Սահակի և Ս. Մեսրոպի անունով դպրոցներ երբէք գոյութիւն ունեցած չեն Նախիջևանում. նոքա չեն եղել ոչ Բաքաջանի կտակի գրուելու ժամանակ, ոչ լետագալ ժամանակներում, ոչ էլ Նալբանդեանցի օրերով: Նալբանդեանցի Սուպրեմ-Կորտի ատեանում տուած երդումը, թէ գրպ-րոցները և բարեգործական հաստատութիւնները, որոնք լիշուած են կտակում, գոյութիւն են ունեցել այն ժամանակները Նախիջևանում և այժմ էլ գոյութիւն ունեն, պէտք է մեկնել միայն հանգուցեալի բուռն ցանկութեամբ՝ վերջ ի վերջոյ իրականացած տեսնել կտակողի դիտաւորութիւնը, որ այնքան հարկաւոր էր, այնքան կարեօր ու մեծ խորհուրդ ունէր Նախիջևանի համար: Մենք թիւրիմացութեամբ մեկնելով Ս. Սահակ-Մեսրոպի դպրոցների խնդիրը, այսպէս ենք պատկերացնում մեզ այդ գործը: Յովսէփ Արդութեանը հիմնարկելով Նոր-Նախիջևանը, շինելով նորա եկեղեցիները և Ս. Խաչ վանքը, կամեցել է մեր երջանկալիշատակ

թարգմանիչների անունով և մի դպրոց հիմնել, բայց նիւթական միջոցների սղութեան պատճառով չի կարողացել իրագործել իւր ալդ շատ կարեոր գիտաւորութիւնը։ Ալդ ժամանակներն ահա հիմնադրի լատուկ պատուերով գնացել է Հնդկաստան Պօլսեցի Տէր Ստեփաննոս քահանան։ Հասկանալի է, որ ալդ վերջինս համոզելով ու լորդորելով կալկաթացի Հայերին կտակներ անելու Նախիջևանի հսմար, պատմել, քարոզել ու լալտնել է նոցա քաղաքի հիմնադրի արքեպիսկոպոսի և Ս. Սահակի և Ս. Մեսրոպի անունով մի դպրոց հաստատելու դիտաւորութեան մասին։ Թիւրիմացութիւնն առաջ է եկել միայն կտակի ոչ բոլորովին պարզ ու ճիշտ խմբագրութիւնից։ Փոխանակ դըրուելու, թէ կտակը լինում է յօգուտ ծրագրուած, լինելիք դպրոցին ու բարեգործական հաստատութիւններին, գրուում է թէ կտակը լինում է յօգուտ արդէն եղած, հաստատուած դպրոցներին և հիւանդանոցին, աղքատանոցին ու որբանոցին, մի խօսքով, Տէր-Ստեփաննոսի խօսքերը կալկաթայում այնպէս են հասկացուում, որ իբրև թէ Նախիջևանում արդէն կան դըրոցները և միւս հաստատութիւնները և միայն պէտք է միջոցներ հալթալիթել ալդ հաստատութիւնները պահպանելու համար, ալսինքն դիտաւորութիւնն ընդունուել է արդէն եղած, վերջացած փասսի տեղ։

Նալբանդեանցն էլ, երևի, հենց ալղպէս է հասկացել գործը, և երդում ուժելով, թէ վերոյիշեալ դպրոցներն ու հաստատութիւնները գոյութիւն ունեն Նախիջևանում այժմ և գոյութիւն են ունեցել և առաջ, չի հետեւել «նպատակն արդարացնում է միջոցները» ճիզութական սովետականութեան, այլ միայն աշխատել է լուծել գորանով անգլիական դատարանի իրաւաբանական ձևապաշտական կոնդիոններն ու հանգույցները։ Ճշմարտութիւնը մնում էր ճշմարտութիւն և արդարութիւնը, որի ամենաջերմեռանդ երկրպագուն էր Նալբանդեանցը, չէր տուժում գորանով։ Մասնէ Բաքաաջանը կտակ էր արել և ցանկութիւն էր լայտնել, որ իւր թողած փողով պահուեն Նախիջևանում դպրոցներ ու բարեգործական հաստատութիւններ, իսկ

անգլիական դատարանը հիմնուելով օրէնքի պահանջած ձեւականութեան վերայ, կարող էր մերժել նալբանդեանցի իրաւացի պահանջը և փողը չլատկացնել իւր բուն նպատակին:

Նալբանդեանցը հասաւ իր նպատակին. նա գործը տարաւ դատարանում և հաւաքուած գումարի կէսն ու ապագայում ստանալիքի իրաւունքը բերեց Նախիջևան, իսկ Նախիջևանցիք ինչ արին: Նոքա, ինչպէս տեսանք, չիրագործեցին նորա լուսերը... Բայց չէ որ, վերջ է վերջոյ, մի բան պէտք էր անել, չէ որ կտօնակատարը, Բենգալիոյ ընդհանուր կառավարիչն, անգլիական պետութեան ձեռքով ամեն օր կարող էր հաշիւ պահանջել, հսկողութիւն ունենալ, իմէ արգեօք փողերը հասնում են իւրեանց նպատակին, իրագործեում են կտակողի ցանկութիւնները: Նախիջևանցիք գործնական մարդիկ են. նոքա հեշտութեամբ են լուծում այդ իւր տեսակի գործեան հանգույցը. նոցա համար խորհրդաւոր նպատակը, գործի գաղափարական կողմը մի առանձին նըշանակութիւն չունէր: Նախիջևանում կար դեռ Խաչատուր Խումաշեամբն քաղաքագլխի օրով 34 թուին բացուած և 72 թուին երեքդասեան քաղաքալին դպրոցի վերածուած մի գաւառական դպրոց. Նախիջևանցիք, առանց դէս ու դէն ընկնելու, տանում են ու այդ դպրոցի ճակատին հայերէն ու ոռւսերէն խոշոր տառերով գրում են «Սոհակ Մեսրոպայ դպրոց» և հնդկական գումարի տոկոսը լատկացնում են դորա պահպանութեան: Եւ զարմանալին այն է, որ այդ տարօրինակ կարգադրութիւնը տեղի է ունենում 78 թուին 72 հայ իրաւասուների պաշտօնական խորհրդակցութեամբ ու արձանագրութեամբ, և չի գտնուում մէկը, որ ձայն բարձրացնէր և հասկացնէր, թէ այդ կարգադրութիւնը գլխովին ապօրինի է, որ դորանով խախտուում է կտակը, ֆլատակւում են նալբանդեանցի լուսերը: Մի քանի խեղճ ու կրակ հայ վարժապետներ միայն այստեղ այնտեղ փսփսում ու բողոքում են այդ ապօրինութեան դէմ, բայց ով էր նոցա լսողը, նոցա ասածները բանի տեղ գնողը. ոչ ապաքէն նոքա աղա չէին, որ նոցա ձայնը լսելի լինէր, Նախիջևանում այն ժամանակները միայն աղա-

Ների ձայնն էր լսելի լինում:

Ալդ ժամանակներից պահպանուել ու մեր ձեռքն է հասել «Նալբանդի զալըլթը» խորագրով Պատկանեանի մի ձեռագիր ոտանուորը, որի մէջ հանգուցեալ բանաստեղծը կէս-հեգնական, կէս-ողբերգական երանգով նկարագրել է ալդ գէպքը և արտալայտել է գորա առժիւ իւր մէջ ծագած մտքերը, խոհերն ու լոլզերը: Երբար բացուում է Սոհակ-Մեսրոպի դպրոցը, ալսինքն երբ տեղի է ունենուում վերոլիշեալ կարգադրութիւնը, Ս. Խաչ վանքի բակի գետինը դղրդում է, քարքարոտ բլբակը փլչում, ճաքում է և միջից դուրս է գալիս Միքայէլ Նալբանդեանոյը Դոյն իսկ օրը Գանգէս գետն էլ սաստիկ ալեկոծուելով ու իւր ժայռոտ ափերը խորապեկելով, բաց է անում սի ուրիշ գերեզման, որի միջից դուրս է գալիս Մասեհ Բաբաջանը և մի ակնթարթում սլանում, գալիս կանգնում է Նալբանդի առաջ: Սիրով բարով են տալիս դոքա միմեանց, գրկուում, համբուրոււմ են կարօտով և գալիս մտնում են նորաբաց դպրոցը, որի բացման հանգէսը պիտի կատարուէր և, գուցէ, նոցա լիշտտակին եկեղեցում ալդ արթիւ պատարագ. էլ մատուցուէր: Մտնում, տեսնում և ապշտծ են մնում: Առաջին նուագ նոքա կարծում են, որ ինքեանք մոլորուել են, մի ուրիշ տեղ են մտել, բայց լետու վերահասու լինելով իրողութեան, լքած, լուսահատ, գլխիկոր վերստին դիմում են գէպի իւրեանց շիրիմները, մէկը ցաւելով, որ այնքան փող է կտակել, միւսն ափսոսալով, որ ալդ կտակած փողը նախիցւան է բերել: Բանաստեղծն իւր ոտանաւորը վերջացնում է հետևեալ խորհրդաւոր մտածողութեամբ.—

«Բայց դու խելագար, թշուառ նախջուան:

Ալ չի գանգատուիս չար տատղիդ վըրան.

Ինչ քեզ վատ արի՞՝ այն կամաւ արի՞,

Զարի բարւոյ մէջ միշտ չարն ընտրեցիր:

Ալսպիսի օրեր դեռ ևս պիտ գան,

Որ ալս օրերուս հայք երնէկ պիտ տան,

Բայց ուշ կը լինի, զի քու բարեկամք

կը լինին արդէն սև, գէճ հողի տակ:»

Պւելի շուտ իրագործուում է Նալբանդեանցի միւս

ցունկութիւնը՝ մի վայելուչ մահարձան կանգնելու Նախիջևանի կողմից Մասեհ Բաբաջանի գերեզմանի վերալ և պատշաճաւոր տապանագրով հայ հաստրակութեան երախտագիտութեան զգացմունքը արտալայտելու հանգուցեալ բարերարի լիշտապակին։ Քաղաքագլուխ Հալբապետեանցը մի պաշտօնական գրութեամբ դիմում է պարզաբեանցին և հասարակութեան կողմից շնորհակառութիւնն է լայտնում Արդարեանց առևտրական տան և նոցա ընտանիքի բոլոր տնդամներին, որ նոքա ալնքան սիրով ընդունել էին Նախիջևանը ներկայացուցչին և նպաստել ու ձեռքբերից եկած օգնութիւնը ցոյց տուել նորան, խնդրում է շնորհակալութիւն լայտնել Նախիջևանի կողմից տիկին Վաւեվառէ Ելիազին, որ նա ալնքան հոգացողութեամբ պահպանել և, առանց մի առանձին դժուարութիւն ու արգելք լարուցանելու, լանձնել էր Նալբանդեանցին իւր ձեռքին եղած գումարը, ևս և խնդրում է, որ առևտրական տունը նեղութիւն լտնան առնէ Նախիջևան ուղարկելիք տան ընթացիկ եկամտից մի վայելուչ մահարձան դնելու Բաբաջանի գերեզմանի վերալ, փորսգրել տալով նորա վերալ ալդ թղթի հետ միասին ուղարկուած տապանագրի օրինակը։

Իսկ ինքը Նալբանդեանցն իւր երախտիքի վոխարէն ինչ հատուցումն է ստանում - և ոչ մի Բայց ալդ գեռ ոչինչ, եթէ միայն գորանով վերջանար գործը. Նա գեռ երախտապարտ Նախիջևանցոց մէջ, ինչպէս արգէն մի անգամ լիշեցինք, հասարակութեան գումարը թագցնողի, մի խօսքով, գողի անուն էլ է վաստակում։ Ի հարկէ, ամենամեծ հատուցումը, որ կարող էին անել նորան Նախիջևանցիք, կլինէր ալն, որ նոքա, իրագործէնին նորա նպատակները և լոյսերը, բայց քանի որ ալդ չարին, նոքա, գոնէ, մի բանով էլ է պէտք է արտալայտտէին իւրեանց երախտագիտութեան զգացմունքը։ Սակայն, կրկնում ենք, ոչինչ չարին, ոչինչ։ Ճիշտ է, առաջին ժամանակները, քանի գեռ թարմ էր նորա վերեզմանը, քանի գեռ չէր մոռացուել նորա լիշտակը, ձալներ լառեցին նորա կուսակիցների շրջանից՝ արձան կանգնելու նորան հասարակութեան կողմից, բայց

շուտով այդ ձալներն էլ լրեցին, և հանգուցեալի բարձի-թողի արած և արօտների մէջ խեղդուած գերեզմանի թումբը ծածկեց մի հաստրակ, անշուք տապանաքար, որ դրեց նորա քոյլ Վարվառէ Մեսնիկեանը, մինչեւ որ երկու տարի սորանից առաջ պ. Գրիգոր Զալխուշեանի ջանքով այդ խղճուկ տապանաքարը հանուեց ու տեղը դրուեց ալժմուալ համեմատաբար շատ վայելուչ մահարձունը:

Երեք մասից է բաղկացած այդ մահարձանը՝ պատուանդանից, սիւնից և բիւստից: Պատուանդանն որ ձարձր է, աստիճաններ ունի և նմանում է հին լունական քարեալ բազկաթուուներին, ոլորսւն բազուկներով և բարձր յենարանով. Սիւնը մարմարիոն է, բոլորչի ձև ունի և ամրացած է պատուանդանի մէջտեղը, իսկ բիւստը, որ զարդարում է սիւնի գլուխիր, արոյից է և շատ նման հանգուցեալի երիտասարդ հասակում քաշաւած պատկերներից մէկին: Ամենալաւ մասը բիւստն է, որ արուեստագործուած է մեր երիտասարդ քանդակագործ պ. Անդրէաս Տէր-Մարուքեանի ձեռքով, իսկ սիւնն ու պատուանդանը, որոնք շինուած են դարձեալ նոյն Տէր-Մարուքեանի ներկայացրած կաղապարից, համաշխատ մասին չունին, որովհետև պատուանդանը շատ մեծ է, իսկ սիւնն համեմատաբար երկու ու վտիտ: Այդ վերջին հանգամանքը, այդ անհամաշափութիւնն է, որ վչացնում է վոեմութեան ընդհանուր տպաւութիւնն: Սակայն, մեր կարծիքով, այդտեղ ամենագլուխորը, ամենաէականը բիւստն է, որ շատ նուրբ է, շատ նման ու սիրուն, որով և ծածկուում է մահարձանի պատկերի ընդհանուր պակասութիւնը:

Երկու. լոկ երկու խօսք կալ գրուած սպիտակ մարմարինի վերայ՝ «Միքայէլ Նալբանդեանց»: Եւ շատ լաւ է, շատ բաւական է, աւելին հարկաւոր էլ չէր¹⁸⁾:

¹⁸⁾ Սիւնի միւս երեսի վերայ նշանակուած է հանգուցեալի ձննդեան և մաշուան թուականները—1830—1866, ինչպէս մինչև ցայսօր ընդունուած է եղել: Այժմ, երբ գտնուած է նորա ձննդեականը, յայտնուամ է, որ նա ձնուել է ոչ 1830 թուին, այլ 1829 թուի նշյեմբերի 2-ին, և մկրտուել է նա-

կան անուններ, որոնք մեկնաբանութեան կարօսութիւն չունին, որոնք ինքեան խօսում են իւրեանց համար, ինքեանք մարմնացեալ մեկնաբանութիւն են: Միքալէլ Նալբանդեանց անունն ալդ տեսակներից է:

Խիշեանի Ս. Թէոդորոս եկեղեցում Տէր. Թադէոս Տէր. Յակոբեան քահանայի ձեռքով Յովակիմ Խալայջեանի կնքահայրութեամբ: Այդ ծննդականը տրուած է 1853 օգոստոսի 15-ին Քիշինեվ Հայոց Կոնսիստորից և վաւերադրած է արքունի կընքով և Նախանդամ Յովհաննէս վարդապետի ու Սամօննեան քարտուղարի ստորագրութեամբ:

Սյօտեղ մենք աւելորդ չենք համարում մի քանի մանրամասնութիւններ հազորդել և Նալբանդեանցի հօր Ղաղար Գրիգորեան Ուստայեանի կամ Նալբանդեանի չորս անդամ ամուսնանալու ժամանակամիջոցների մասին: Առաջին անգամ նուամուսնազած է Եղել մօտաւորապէս 1814 18 թուականներին Պետրոս Գիւմուշեանի Տիրուհի գտտեր հետ, երկրորդ անգամ—1818-20 թուերին Յարութիւն Աեւելեկեանի Ծիրին (Գեղեղիկ) աղջկայ հետ, երրորդ անգամ—1826-28 թուերին Մերկեան Միսերեանի այրի Աննայի հետ, չորրորդ անգամ—1828-29 թուերին Անանիա Պարոնեան: Սուլուլեանի այրի Մարիաննէի հետ: Ղաղարոս Ուստայեանը վախճանել է 1864 թուի սեպտեմբերի 10-ին:

Այդ չորրորդ ամուսնութիւնը, որից ծնուել է և մեր համակրելի հեղինակը, միշտ եղել է աղրիւր խոռվութեան Նալբանդեանցի ընտանիքի համար, որ աւելի զօրացել է հօր մահից յետոյ, երբ առաջ է եկել ժառանգութեան ինդիրը: Առաջին ամուսնութիւնից ծնուած Գրիգորը և երկրորդ ամուսնութիւնից ծնուած Լուսեղենը միշտ աշխատել են ապացոյց տակ իւրեանց հօր չորրորդ ամուսնութեան ապօրինութիւնը, որ կարողանան ինքեանը միայն ամրանալ ամրող ժառանգութեան:

Թէ ինչպէս էր վերաբերում ինքը Նալբանդեանցն այդ կոհմներին ու անվերջ ընտանեկան վէճերին, այդ ցոյց է աայիս հանգուցեալի Կամբշինից 1866 թուի փետրուարի 8-ին Գրիգորին գրած նամակը, որ, մեր կարծիքով, նորա վերջին նամակը պիտի լինի:—Շեղբայրական ողջունիւ յայտ առնեմ ոը յունվարի 11-ից գրած նամակդ ստացայ երեկ ամսոյս 1-ին պատճառը չպիտեմ նամակիս հետ վերադարձուցի պահարանը:

եւ ճշմարիտ, ով չի լսել արդ անունը և նր հալը կարդալով արդ անունը, չի պտտկերացնիլ իւր սրտում, իւր հոգու հալելում մէջ մի կալծակ ու կրակ գործի, մի հմուտ գրականագէտ, մի քանքարաւոր հրապարակախօս, ազգի մի անկաշառ ու անխարդախ բարեկամ... Հնդկաստանի ճանապարհորդութիւնը և նորա արդ ճանապարհորդութեան ժամանակ ցոյց տուած գործունէութիւնը նորա զլուխը զարդարող դափնի պսակի լարազուարճ տերեւներից մէկն է միայն, իսկ

որ ինքու աչքովդ տեսնես խօսքիս ստուգութիւնը. Սիրելի եղբայր, ես պարան տարի չարչարուած լինելուց յետոյ այսօր էլ ծանր հիւանդութեան տիրացած եմ որ մաշում ինձ առաւել քան թէ տարի ուստի և բնաւ սիրտ չունիմ ձեր անձոռնի կը-ուիւները մտիկ անելու և թէ որ նամակներուդ մէջն էլ չինէին անպատշաճ և անձոռնի բաներ հարկաւ ձեռքս կպած ժամանակ կը պատասխանէի բայց պյնպիսի թուղթերու պատասխաները իմ գործս չէ. Որովհետեւ իմ աքսորը և տկարութիւնը մինչեւ պյժմ տևում են և գեռ կարող են երկարիլ ուստի ես բարւոք համարեցայ դարձեալ Զեր շահը նայելով գրել տեղւոյդ Մաղիստրաթին մի խնդիր, որ նա մեր հօրը վախճանից յետոյ ինչ որ մնացել է ի յայտ բերէ թէ շարժական և թէ անշարժ և պյու բոլորը ինչպէս օրէնքը կը հրամայէ ծախէ. և գումարը պահելով իւր գանձարանում բննէ և վճռէ ժառանդների իրաւունքը. և ըստ պյնմ իւրաքանչիւրին իւր պատկանեալ բաժինը տայ: Այս խնդրի մէջ, որ պյօր պյու թղթիս հետ փոշտ տուի գրած եմ նոյնպէս և եղբօրս Ղաղարոսին Սերոբէն ստացած 700 մանէթը, եթէ ստուգապէս հօրս փոխն է եղած. ուրեմն ես ընդունում եմ իմ հաշուխ վրայ: Ի հարկէ գրածիս օրինակը բեզ կուտան և դու կը տեսնես, որ բնաւ կողմնապահութիւն չկայ պյու ուղածս կատարեալ արդարութիւն է և իրաւունք: Աս երկար ու բարակ գատաստաններու սիրտ չունիմ և մէջ տեղի եղածը չարժի առաջ տալապայի, մնաց որ պատշաճ բան էլ չէ յոյս ունիմ որ գուն ալ նոյն ոգոյն կը հետեւիս և օր առաջ պյու գործը վերջանալուն ջանք կանես, ապա թէ ոչ, վնասը ձեզ կինի ինձ չէ ինչու գուք առուտուրի մարդ էք: Ինձ համար թէ որ երկարելու լինի մի և նոյն է զընթէ:

ալդպիսի մշտադալար տերևներ գեռ շատ ու շատ ունին նորա դափնիները...

Մի աշնանալին մառախլապատ, պաղ, անձրևոտ օր էր, երբ մենք հրաւէր սատացանք՝ ներկայ գտնուելու հոգեհանգստեան և մահարձանի օրհնութեան ու բացման հանդիսին։ Նշանակուած ժամին մենք արդէն Ա. Խաչ վանքումն էինք։ Համարեած թէ մարդ չկար - ազգականները, քանդակագործը, Զալիխուշեանը և ալլ ևս մի երկու երեք մարդ։ Երջապատը տիսուր էր. ծառերը տերևաթուփ, դաշտը սևացած, չորս կողմն ամալի, մաղող անձրւի ջրերն էլ շիթ-շիթ կաթկիթում էին մի տարի առաջ կանգնեցրած Պատկանեանցի և նոր միալն

Գրում ես թէ անպատճառ միտք ունիս գալու ինձ աեսաթեան. շատ շնորհակալ եմ. բայց այս է բանը որ շոգենաւերը հազիւ հաղ ապրիլի 20-ին սկսեն ներգործել իսկ ես մայիսի 1-ին գուրս կուգամ այս տեղից Սամարի գաւառը խըմըլ խմելու երթալու և արդէն մեկ ամիս է որ մինիստրից ինդրել եմ և այս օրերս յօյս ունիմ հրամանը անպատճառ ստանալու, ուրեմն քո զալը զուր կը լինի զարնան, ես կը վերադառնամ օգոստոսի 15-ին և եթէ մինչեւ այն ժամանակ հրաման գուրս չգայ ինձ նախիցւան գալու այն ժամանակ հրամացէք, ինձ այս տեղ կը գտնէք։ Գրում էք որ գրեմ սիրտիս ուզածը ու բերէք շատ շնորհակալ եմ ինձ ոչ մի բան հարկաւոր չէ և գուր զուր տեղը անհանդիս մի լինէք։ Տկարութիւնս չէ ներում երկար բարակ նամակ գրել ուսաի և վերջացնում եմ զիրս ցանկալով քեզ և քո ընտանիքին առ ի սրտէ ամենայն բարի, ամենայն յաջողութիւն, առողջութիւն և երջանիկ կեանք։

Ինձանից շուրջ նամակ մի՛ սպասիլ ինչու որ չունիմ կարողութիւն գրելու, հարկաւորութիւն էլ թէ որ ասենք չկայ շատ սուտ չի լինիլ։

Մնամ քեզ միշտ և առ ի սրտէ բարեաց փափագող եղապար
Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Այս նամակը մենք ստագել ենք պ. Յովհաննէս Բարասինեանցից, իսկ մեր 10 ծանօթութեան մէջ յիշուած հայատառ և թրբարաբառ նամակը - պ. Սերովիկ Զաթալրաշեանից։ Այս տեղ պարտը ենք համարում հրապարակով երկուսին էլ յայտնելու մեր շնորհակալութիւնը։

դրուած մահարձանների վերալից, Նըշապատի և բնութեան այդ տիսրութեան ըստ ամենալինի ձայնակցում էր և կատարուող հոգեհանգստեան տիխուր կարգը. մեղմ, շշնջիւնի նման լսուում էին ողբ-մեղեղիները, կարգացուում էին աղօթքները, խունկն առատութեամբ ծխում էր, մոմերը վալիկնով վառւում էին...

Ոչ մի խօսք չարտասանուեց. բոլորեքեան լուռ ու մունջ էին. Եւ ինչ հարկաւոր էր խօսքը, ինչ սիրտ կար խօսելու. ամենքն է հասկանում էին, թէ ինչ եղաւ, ինչ կատարուեց. Գլխիկոր վերադարձանք վարդապետի խուցը՝ մի շաժակ թէլ խմելու, սառած ոսկրներս տաքացնելու. Ահա ալդտեղ, ալդ խցիկում, մի երկու-երեք համակարծիք մարդկանց շըշանում մարմին և արիւն առաւ ալն միտքը, որ աւելի պիտի անմահացնէր հանգուցեալի լիշտակը, քան թէ նոր միալն օրհնած և բացած մարմարինը և արուրը. Որոշուեցաւ անպատճառ գլուխ բերել նալբանդեանցի երկերի հրատարակութեան գործը, որի մասին շատ ժամանակ էր ինչ խօսուում էր, բայց որ մի քայլ էլ առաջ շեր գը. նում:

1904 թ. Մարտի 3.

Նոր-Նախիջնան.

Ը. ՇԱՀԱԶԻՋ